

ԲՈՎԱՆԴԱԳՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ	1-2
Վսեմ. Ծիր. Աղաճանեան Կաթողիկոսի ճառը՝ Ապրիլեան Նահատակներու յիշատակին .	49
ԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԻ	
Վսեմ. Գեղեթ. Ծիր. Գրիգոր-Պետրոս Ժե. Աղաճանեան Կաթողիկոս Պատրիարք Կա- թողիկէ Հայոց Կ'այցելէ Ս. Ղազար .	52
Վսեմ. Գեղեթ. Հոգեւոր Տէրը Կը քարոզէ Ս. Մարկոսի բնակն	53
Վսեմ. Գեղեթ. Հոգեւոր Տէրը Մուրաւ - Ռաֆայէլեանի մէջ	57
Մայրաձանքին հանգէսները ի պատիւ Մխի- թար Արքայապետի Վսեմ. Հոգեւոր Տէրոջ Պատրիարքութեան Բանաժողովին . .	58
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ	
Անանեան Հ. ՊՕՂՈՍ. - Պատմական յիշա- տակարան մը Գուրգի Բ. Ժողովքի մա- սին (Շար.)	64
ՊԱՏՄԱԿԱՆ	
Քիւրճեան Զ. - Բաբակ եւ Սահլ Իսն Սըն- բատ (Էջ մը մեր իններորդ դարու պատ- մութենէն) (Շար.)	72
ԱԴԱՄԻԱՆ Հ. Ա. - Եւրոպայի արար պատմա- դիրը եւ Հայերը (Շար. եւ վերջ) . .	96
ԵՐԵՄԻԱՆ ԱՐԱՄ. - Փշրանքներ Հայ աշու- ղական գրականութեան (Շար.) . .	91
ՅՈՎՀԱՆՆԵՍԻԱՆ Հ. ՎԱՀԱՆ. - Սրտի ծա- ղիկը	104
— Մեր լեզուն	105
— Սիրտ իմ դարձեալ	106
ԳՐԱԽՈՍԱԿԱՆ	
Քիւրճեան Զ. - «Գորգազործութիւնը Հա- յաստանում», Վ. Ս. Թեմուրճեանի .	107
— «The Reign of Al-Mu'tasim by Abu Ja'far Muhammad ibn Jarir Al-Tabari»	110
— «Հայ քաղաքագրական հրատարակու- թիւնները 260 տարում», Հ. Ս. Սա- փեանի	111
— «Յովհաննու Որոտնեցոյ վերլուծութիւն Ստորագրեանց Արխատիկ»	111
— «Ancient History of Western Asia, India and Crete», by Bedrich Hrozny	112

SOMMAIRE

ARTICLE DE FOND	PAGE
Discours de S. Eminence le Card. Agagia- nian à la mémoire des martyrs armé- niens d'Avril 1915	49
ECHO ARMÉNIEN	
La visite à St. Lazare de S. Em. le Card. Gr.—Pierre XV Agagianian, Patriarche des Arméniens catholiques	52
Sermon prononcé par S. Em. le Card. Aga- gianian au Collège Moorat—Raphael .	57
Les solennités du monastère de St. Lazare en l'honneur de l'Abbé Mekhithar et du 20ème anniversaire du patriarcat de S. Em. le Card. Agagianian	58
PHILOLOGIE	
ANANIAN P. PAUL. — Un document histo- rique sur le deuxième synode de Dowine (Suite)	64
HISTOIRE	
KURDIAN H. — Babak et Sahl ibn Snbat (Une page de l'histoire de l'Arménie au IX ^e siècle. — Suite)	72
ADAMIAN P. A. — L'historien arabe Ya- koubi et les Arméniens (Suite et fin) .	96
LITURGIE	
HATSOUNI P. VARDAN. — Histoire du Bréviaire Arménien (Suite)	83
LITTÉRATURE	
YEREMIAN ARAM. — Pages choisies de trouvères arméniens (Suite)	91
HOVHANNESSIAN P. VAHAN. — La fleur du coeur	104
— Notre langue	105
— Reviens, mon coeur!	106
RECENSIONS	
KURDIAN H. — «L'art du tapis en Armé- nie» de V. S. Thémourdjian	107
— «The Reign of Al-Mu'tasim by Abu Ja'far Muhammad ibn Jarir Al-Tabari»	110
— «Deux cent soixante ans de publications cartographiques» de H. S. Sdépanian .	111
— «L'analyse des Catégories d'Aristote par Jean d'Orotn»	111
— «Ancient History of Western Asia, India and Crete», by Bedrich Hrozny	112



1843 ~ 1958
ՀԺԶ. ՏԱՐԻ
•
ԹԻԻ 3-5
ՄԱՐՏ - ՄԱՅԻՍ

ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ~ ԳՐԱԿԱՆ ~ ԳԻՏԱԿԱՆ ~ ԲԱՐՈՑԱԿԱՆ

Revue P A Z M A V E B

CXVII^e année, 1958, N. 3-5 Mars - Mai

Վ Ե Հ Ի Ն Խ Օ Ս Ք Ը

ՅՈՅՍ ՆՈՅՍ ԼԻ Է ԱՆՄԱՀՈՒԹԵԱՄԲ

(Ապրիլեան Նահատակներու յիշատակին)

Ճառ՝ խօսուած Վսեմ. Ծիր. Գրիգոր-Պետրոս Ժե.
Աղաճանեան Կաթողիկոսի կողմէ, Մուրաւ-Ռաֆա-
յէլեան վարժարանի մէջ, Վենետիկի այցելութեան
առթիւ, 25 Ապրիլ 1958ին:

ԱՆՆԱԽԸՆԹԱՅ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Եթէ ըսեմ որ յուզուած եմ, ըսելու կերպ մը չէ, սիրելի գաւակներս. բայց
յուզումը որ կը գգամ այս պահուս՝ հպարտանքի յուզում է: Այնքան արժա-
նաւոր կերպով վերջիւնեցի մեր ազգին դարաւոր պատմութեան ամենէն սխրալի
էջերէն, դրուագներէն մէկը. առաւօտեան աղօթքով՝ ի յիշատակ մեր նահա-
տակներուն, այս երեկոյեան հանդէսով՝ արտասանութիւն, խմբերգ, արձակ,
նոտանաւոր...: Յիշատակի խօսք մըն ալ դուք կ'ուզէք Մեզմէ, քանի որ պա-
րագաներու բերումով՝ այս տարի ձեր հետ կը կատարեմ այս ոգեկոչումը,
Մուրաւ-Ռաֆայէլեան վարժարանի մէջ: Իմ խօսքս ուրիշ բան չէ, բայց եթէ
շեշտել քանի մը կարեւոր կէտեր, եւ գտնուի յանձնել ձեր մանուկ սրտերուն,
որոնք, վատաւ եմ, անելով այս տեսակ միջավայրի մէջ, գտնուի իսկապէս
արդիւնաւոր, տոկոսաբեր պիտի դարձնեն իրենց ապագայ կեանքին մէջ, որ
Մենք կը մաղթենք ըլլայ երկար ու երջանիկ:

ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆԸ

Այս ոգեկոչումը, սիրելի գաւակներս, նախ եւ առաջ առիթը կու տայ
Մեզի հաւատքի մը ներգործութիւնը արտայայտելու զօրաւոր կերպով. հա-
ւատքի մը արտայայտութիւնը, ներգործութիւնը՝ անմահութեան մասին: Շատ
ուրիշ կերպով կը պատշաճի իմաստութեան Գրիգոր խօսքը. «Յոյս նոցա լի է
անմահութեամբ»: Հաւատքի արտայայտութիւն՝ անմահութեան հանդէպ, մեր

նահատակներուն անհատական անմահութեան հանդէպ: Անոնք, երբ 1915ի Ապրիլ 24ին, ստացան բնաջնջումի այդ դաժան ժվնիւր, անոնք՝ հայ քրիստոնեայ ազգին գաւակները, Ջատկական շրջանի մէջ ըլլալով, արդէն կրկնած էին ամէն օր - մեր եկեղեցիին Յիսուսի Յարութեան տօնը քառասուն օր կ'երկարաձգէ - եկեղեցիներու գմբէթներու տակ, տաճարներու մէջ, վանքերու մէջ ամէնուրեք, *Քրիստոս յարեալ ի մեռելոց*, մեր յոյսը, մեր յարութեան գրաւականը: Անոնք իսկապէս այդպէս տոգորուած էին իրենց անհատական անմահութեան յոյսովը, նահատակք պանծալիք:

Ուստի, սիրելի գաւակներս, անոնք որ անհատութեան մոլուցքէն տարուելով՝ կը ժխտեն անդենական կեանք, կը ժխտեն անմահութիւնը անհատներու, թոյլ տուէք որ ըսեմ, անոնք մարմնոյ դահիճներէն աւելի դահիճ կը դառնան. որովհետեւ դահիճը հոգին չի ոչնչացներ. դահիճը, դարաւոր դահիճը՝ մարմինը միայն կը փնացնէ, բայց հոգին կը սարսույց անմահութեամբ: Անհատաւոր կ'ըսէ թէ անհատին մահուամբ՝ ամէն ինչ կը վերջանայ, հոգին մէջ ամէն բան կը հաւատարի, դահիճը եւ նահատակը: Այս է ամենամեծ վիրաւորանքը: Բայց դուք, Մենք կը ժխտենք. մեր հայրերու բերնով, մեր հայրերու հաւատով, մենք, այս տեսակ օրերու մանաւանդ, փառած Քրիստոսի յարութեան, յոյս մեր, Աստուած մեր, «Աստուած հօր իմոյ փառաւոր արարից գնա», մենք կը վերակոչենք այդ հաւատքը եւ կ'ըսենք դարձեալ. մեր նահատակները յաչս դահիճներու կոքսուեցան, անոնց շիրիմները մեզի անծանօթ կը մնան. բայց անոնց հոգիները անմահ են. անոնք որ նահատակուեցան Քրիստոսի երկրպագելի անուան, իրենց հայրենիքի, իրենց հայրենական սրբութիւններուն համար, անոնց հոգիները, այո՛, անմահ են. անոնք միացած են այն հոյեանուն, վարդանանց հոյեանուն, որոնց յիշատակը Սուրբ եկեղեցին ամէն տարի կը պանծացնէ ուրախութեամբ, որովհետեւ անոնց մէջ կը տեսնէ իր ալ տեսականութեան գրաւականը:

ՀԱՅ ՑԵՂԻՆ ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆԸ

Բայց սիրելի գաւակներս, այս ոգեկոչումը Ապրիլեան նահատակներուն, ո'չ միայն արտայայտութիւնն է հաւատքի՝ անոնցմէ իւրաքանչիւրին ի ծոց Աստուծոյ, այլ նաեւ արտայայտութիւնն է հաւատքի մեր ցեղին, մեր ազգին ալ տեսականութեան:

Այո՛, մենք այս տեսակ օրերուն մանաւանդ՝ հաւատքին կը վերանորոգենք: Ազգ մը որ դահիճներ կու տայ, կրնայ ոչնչանալ. բայց ազգ մը որ նահատակներ կու տայ, որ հանճարներ կու տայ՝ չի մահանար, չի մեռնիր. փոքորիկը կրնայ անցնիլ, կրնայ ճիւղեր կտորել, բայց բունը պիտի մնայ. եւ Աստուծոյ օրհնութեամբ, եւ ազգին մնացած գաւակներուն ունեացումովը, միութեամբ՝ պիտի տեսնէ, պիտի յարատեւէ, պիտի գրաւէ միշտ ազգերու հոյիւն մէջ իր արժանապայել տեղը:

ԿՏԱԿ ԵՒ ԽՈՍՏՈՒՄ

Սիրելի գաւակներս, հաւատքի արտայայտութիւն մըն է որ կը կատարենք այժմ. բայց միեւնոյն ժամանակ այսօր առաջադրութիւններու նորոգման օր մըն է:

Մենք հաւատարիմ պիտի մնանք, պիտի ըսէք, սիրելի մանուկներ, երիտասարդներ, մեր նահատակներուն ուխտին եւ կտակին. հաւատարիմ պիտի

մնանք մեր լոյս հաւատքին: Ու վստահ կրնաք ըլլալ որ հաւատքի լոյսն է որ այնքան աւելի բարձրացուցած է մեր հայ ազգին բնատուր ձիրքերը: Դուք պիտի վերանորոգէք, ուրեմն, ձեր ուխտը՝ հաւատարիմ մնալու Քրիստոսի աստուածութեան - որու մասին այս առաւօտ կը խօսէինք Սուրբ Մարկոսի մէջ - եւ անոր բոլոր հետեւանքներուն: Դուք պիտի վերանորոգէք ձեր ուխտը՝ հաւատարիմ մնալու մեր ազգին վսեմ ձիրքերուն, հաւատարիմ մնալու անոր պատմութեան ուսումնասիրութեան, անոր լեզուին պահպանութեան, անոր երգին ներդաշնակութեան:

Բայց այս երկրորդ մասը, դուք թերեւս պիտի ըսէք, որ Մուրաւ-Ռախա-յէլեան վարժարանի մէջ աւելորդ է. այդ ամէնը մենք ունինք արդէն: Ճիշտ է, սիրելի գաւակներս, ունիք, եւ ասոր համար դուք երջանիկ էք, որ այս տեսակ միջավայրի մէջ կը գտնուիք. սակայն դուք պէտք է որ արժեքաւորէք այն բոլոր ջանքերը որ կը թափուին ձեր վրայ. դուք կը մնաք իբրեւ յոյս ո'չ միայն ձեր ընտանիքներուն, որոնք կը գուրգուրան ձեր վրայ, այլ կը մնաք նաեւ յոյսը մեր ազգին. ու ահա այդ առաջադրութիւնները նորոգելով՝ դուք պիտի վնոէք որ ձեր փութաջանութեամբ, ձեր չարքաշուքեամբ, ձեր գոհողութեան հոգիովը պիտի տասնապատկէք, հարիւրապատկէք այն բոլոր ջանքերը որ կը թափուին ձեր վրայ:

ԳՆԱՀԱՏԱՆՔ ՈՒ ՄԱՂԹՄՆՔ

Եւ ասով կ'անցնինք հայրական գնահատանքի Մեր խօսքը ուղղելու ամբողջ Միսիքարեան Միաբանութեան: Մեզի խորապէս ծանօթ են այն բոլոր գոհողութիւնները որ կ'ըլլան Միաբանութեան կողմէ, վարդապետներու կողմէ, որոնք միայն գիտութիւն չէ որ կը ջամբեն ձեզի, միայն դաստիարակութիւն չէ որ կու տան ձեզի՝ նուիրական այդ գաղափարներու պահպանութեան ու պաշտամունքի մէջ, այլ իրենք զիրենք կը գոհեն ձեզի համար:

Անոնք կը սպասեն երախտագիտութեան, անշուշտ, որովհետեւ ձեր կողմէն երախտագիտութիւնը նշան է որ իրապէս կ'օգտագործէք ձեզի աւանդուած դասերը: Անոնց վարձատրութիւնը, անոնց ակնկալած վարձատրութիւնը Աստուծոյ է. անոնք կրնան վստահ ըլլալ որ իրապէս ունին իրենց վրայ Աստուծոյ օրհնութիւնը, ունին գնահատանքը սուրբ եկեղեցւոյ եւ երախտագիտութիւնը բոլոր ազգին. անոնք է Մեր մաղթանքը յանձին Գերայծ. Աբբաօր, որ ամենաբարին Աստուած բազմապատկէ ոյժերը, այսպէս նուիրուող ոյժեր, որ պէտքի ձեր միջոցաւ ալ, ստուարաշափ թուով, հայ ազգին նոր էջերը կերտուին լուսապայծառ:

ՀԱՆԳԻՍԱԽՈՐ ԵՐԳՈՒՄ

Սիրելի գաւակներս, ես պէտք էի որ ձեզի ներկայացած ըլլայի ուրիշ տարազով. պարագաները այնպէս բերին որ ներկայանամ ձեզի արիւնքներկ (*կ'աղնարկէ ծիրանիին, որով նոյն առաւօտ մասնակցած էր Ս. Մարկոսի մէջ տեղի ունեցած եկեղեցական արարողութիւններուն*): Նշան մըն է ասիկա - ձեր կողմէն կը խօսիմ, ձեր սրտէն կը խօսիմ - որ եթէ երբեք դաժան թշնամիներ յարձակին դարձեալ այս նուիրական գաղափարներուն դէմ, որ հայութեան փառքն ու պարծանքն են, - Աստուծոյ Քրիստոսի սիրոյն եւ մեր ազգին յարումին, - մենք, սիրելի գաւակներս, պատրաստ ենք նորէն արիւնքներ, բայց ո'չ դաւաճանելու:

